ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N <ՄՕՀԿ-ՇՀԱՊՁԲ-11/1>

ք. Երևան <_____>______________20 թ.

<Մասնակցի անվանումը>, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <Ընկերության տնօրենի անուն ազգանունը>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

*1. Համաձայնության առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է <Պատվիրատուի անվանումը> (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ <Գնման առարկայի անվանումը> ձեռքբերման <ՄՕՀԿ-ՇՀԱՊՁԲ-11/1> ծածկագրով պարզեցված ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում և սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված <Գնման առարկայի անվանումը> ձեռքբերման N ՇՀԱՊՁԲ----/--- գնման պայմանագրից բխող պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ ------------------թվերով------------------ (--------------------------տառերով--------------------------) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուն, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող <Մասնակցի բանկի անվանումը> կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով <Մասնակցի անվանումը>, հանձնարարում է <Մասնակցի բանկի անվանումը>-ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում <Պատվիրատուի անվանումը> առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

*2. Այլ պայմաններ*

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև 20 թ.______________-ի -ը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

<Մասնակցի անվանումը>

<Մասնակցի հասցեն>

<Մասնակցի բանկի անվանումը>

Հ/Հ

ՀՎՀՀ

տնօրեն՝ --------------------------------
(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ ----------------------------
(ստորագրություն)

Կ.Տ